ՍԱԼԼԻ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Սարգիս Ղազարյան
Հեռախոս՝ +374.93. 68 77 43
Բնակչություն՝ 264
Սալլի գյուղը հիմնվել է շատ հին ժամանակներում: Այդ մասին կա հիշատակություն Ստեփանոս Օրբելյանի <<Պատմութիւն նահանգին Սիսիական>> գրքում, որում հիշատակված է, որ Գրիգոր Լուսավորիչի հանձնարարությամբ Հայաստանի տարբեր վայրեր քրիստոնեության քարոզման նպատակով ուղարկված քարոզիչներն իջևանել են Սալլի գյուղում: Գյուղի տարածքը շատ է դուր եկել նրանց և սրբերից մեկի՝ սուրբ Մամասի մասունքները թաղվել են նշված տարածքում: Հետագայում նույն տեղում կառուցվել է եկեղեցի:
Գյուղի ներկա բնակչության մեծամասնությունը գաղթել է Խոյից և Սալմաստից: Սալլի գյուղը գտնվում է ներկայիս Վայոց ձոր մարզի հյուսիս-արևմտյան մասում: Հողատարածքները ձգվում են 1400-ից մինչև 2850 մետրի սահմաններում:
Գյուղը մարզկենտրոնից հեռու է 20 կմ, մայրաքաղաքից՝ 130 կմ: Կլիման չոր է ու ցամաքային: Հաճախակի կրկնվող երաշտներից տուժում են գյուղատնտեսական մշակաբույսերը:
Տարածքում մշակվում են բոլոր այն գյուղատնտեսական կուլտուրաները, որոնք տարածված են Հայաստանում: Բնակչությունն զբաղվում է գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ: Տարածքը 1683 հա է, որից՝ 603 հա արոտ, 72 հա՝ խոտհարք, 100 հա՝ վարելահող:
Գյուղն ունի հիմնական դպրոց, սպորտային բաց հրապարակ, վարչական շենք, բուժկետ:
Գյուղի հիմնական խնդիրը խմելու և ոռոգման ջրով ապահովելու հարցն է: Քանի որ ոռոգման ջրի մայր առուն անցնում է ավազուտների և հրաբխային նստվածքների միջով, ջուրը տեղ է հասնում մեծ կորուստներով:
Գյուղում կա 1 պանրագործարան և 1 մրգի սառնարան: Գյուղը հեռախոսաֆիկացված է: